ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**11 սեպտեմբերի 2024թ.** **N 7-Ա**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 05.09.2024թ.-ին ստացված 51 քաղաքացիների որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Քաղաքացի Արտակ Հայկազի Զեյնալյանը 2024 թվականի սեպտեմբերի 5-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ որոշում:

Որոշմանը կից ներկայացված են որոշումը ստորագրած բոլոր 51 քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, Եվրոպայի Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և հիմնավորումը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, ինչպես նաև նախաձեռնող խմբի էլեկտրոնային հասցեն:

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:»:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 25 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Նախաձեռնող խումբը գրանցման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով, նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները, համապատասխան օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, և նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշման ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված են «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, որոշումն ստորագրած քաղաքացիական նախաձեռնության բոլոր 51 անդամների ստորագրությունները վավերացված են նոտարական կարգով:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տասն աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին կամ մերժում է գրանցումը, եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները պահպանված չեն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

Նույն հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո՝ 60 օրվա ընթացքում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 5-րդ և 19-րդ մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.**

1. Գրանցել Ազգային ժողովին «Եվրոպայի Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով կազմավորված նախաձեռնող խումբը և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցել Արտակ Հայկազի Զեյնալյանին:

2. Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով ստորագրությունների հավաքման համար 60-օրյա ժամկետ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 14-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Վ.Հովակիմյան**